

ԵԹԷ ԶԵՆՔ ՈՒԶԵՐ ԿՈՐՍՈՒԻԼ ԻՐԻԵՒ ԱԶԳ

Հայաստանի անկախութեան վերջին թուականը խորհրդանիշ է գերագոյն գոհարբութեան: Թուական մը, որուն մասին այն- քան գրուած ու խօսուած է:

Հայ ժողովուրդի վերջին գաւակներու նուիրաբերումով շահուած այս թուականը չարչարանքի եւ մեղադրանքներու ամբողջ պատմութիւն մըն ալ ունի իր ետին:

Այնքան ատեն, որ Մայիս 28ը շոշափելի իրականութիւն էր՝ անկախ Հայաստանի փաստով, այնքան ատեն որ Մայիս 28ը իր գորութեան կանոններով հաստատուած էր, հակադրութիւններ չկային ընդհանրապէս անոր հանդէպ: Ընդհակառակը, ոչ միայն հակադրութիւններ չկային, այլեւ կային համակրական խօսքեր անոր հասցէին՝ մէկը միւսէն աւելի գորաւոր, մէկը միւսը գոյղ անցնող:

Ներքին երկպառակութիւններ կամ եղբայրասպան վեճեր չկային: Կար մէկ մտածողութիւն եւ հասարակաց մէկ գործելա- կերպ — հայրենիքի վերաշինութիւնը, անկախութեան պահպա- նումը եւ հայրենի հողերուն ամբողջացման ձգտումը:

Բայց երբ Մայիս 28ով ստեղծուած Հայաստանը տատանեցաւ եւ ընդունեց խորհրդային վարչակարգ, առաջ եկան հարցեր, որոնք խժըժանքի եւ հեզնանքի առարկայ դարձուցին Մայիս 28ը:

«Ժողովուրդի մը մեծութիւնը կարելի է տեսնել ու չափել իր դժբախտութեան եւ անկման օրերուն», կը հաստատէ Ռուբէն: Եւ ի՛նչ քան չէ ըսուած Մայիս 28ի մասին՝ 2 Դեկտեմբեր 1920էն ետք:

Քարկոծեցին գայն՝ երբ չկար ան իրրեւ շոշափելի իրակա- նութիւն: Նիզակ ճօնեցին անոր կոնակէն: Եղաւ ժամանակ, երբ ուրացան անոր գոյութիւնն անգամ: Եղբայրասպան վեճեր առա- ջացան եւ ներքին երկպառակութիւններ ծնունդ առին անոր ի խնդիր՝ երբ ա՛յ չկար Մայիս 28ը Հայաստանի հողային տարածու- թեան վրայ:

Բայց երկրային տարածութիւնը շփոթուեցաւ գաղափարա- կանին հետ, որ չի ճանչնար սահմաններ: Երբեմնի նիզակ ճօնող- ներէն ու ֆարկոծողներէն ո՞վ կը համարձակի ըսել, թէ անոնց հարուածները կրցած են մագաչափ մը իսկ վիրաւորել Մայիս 28ի գաղափարական դիմագիծը: Ո՞վ կը յանդգնի յայտարարել — ո՞վ այդ յաւակնութիւնը ունի յայտնելու — թէ յաջողած է վերջնական յաղթանակ մը տանիլ Մայիս 28ի գաղափարին վրայ, որ ո՛չ Մայիս 28ով կը սկսի եւ ոչ ալ Մայիս 28ով պիտի վերջանայ ապահովաբար:

Մենք կորսնցուցինք անկախութիւնը, բայց չկորսնցուցինք հայրենիքը: չկորսնցուցինք հայրենիքի գաղափարը: մանաւանդ՝ չկորսնցուցինք Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի գաղա- փարը:

Անոնք, որ կը համարձակին Մայիս 28ի գաղափարը, այ- սինքն՝ Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի գաղափարը խոր- տակելի, կա՛մ պէտք է անոր սնանկութիւնը փաստեն եւ կամ իւրաց- նեն գայն:

Ուրիշ կարելիութիւն չի՛ կրնար ըլլալ: Կարելի՞ քան է արդեօք հայրենիքի անկախութեան, ազա- տութեան եւ ամբողջացման գաղափարին սնանկութիւնը ապացու- ցանել: Եթէ այո՛, արդեօք դաւաճանած պիտի չըլլա՞նք այն ոգիին, որ մեր ամբողջ պատմութեան մէջ կ'անցնի կարմիր թելի մը պէս:

Հայրենիքը կամ հայրենիքի գաղափարը կամ Մայիս 28ը ապրանք մը չէ, որ մէկ օր հրապարակ հանուի, միւս օրը դարակը դրուի՝ ըստ պայմաններու եւ արտաքին ուժերու դասաւորման: Այդպիսի մօտեցում մը ոչ միայն պատեհապաշտութիւն պիտի ըլ- լար, այլեւ դրսեւորումը ստրկացած մտայնութեան մը: Ճիշդ է, որ այժմու պայմանները կրնան նպաստաւոր չըլլալ նոր Մայիս 28ի կերտման, բայց ատիկա չի նշանակեր, թէ ֆուրջի կտորի մը պէս պէտք է մէկդի շարժել անոր գաղափարը:

Ցնորք ալ չէ հայրենիքի գաղափարը, ինչպէս ոմանք կ'ուզեն հաւատացնել մեզի: Հայ ժողովուրդի էութիւնը ըմպած ունի հայ

չի կրնար այդպիսի հաստատում կատարել: Հայաստանի ամբող- ջականացումն ու անկախացումը ցնորքներ չէի՞նք 15րդ եւ 16րդ դարերուն, երբ մեր ժողովուրդը գրեթէ ամբողջութեամբ կը գրտ- նուէր խաւարի մէջ: Երազատեսութիւն չէ՞ր ազատութեան գաղա- փարը 17րդ դարէն մինչեւ 19րդ դարու վերջը: Ի՞նչպէս եղաւ, որ շոշափելի իրականութիւններ դարձան անոնք այս դարու առաջին քսանամեակին:

Անկախութեան եւ հայրենիքի գաղափարները չեն կրնար մենաշնորհը ըլլալ այս կամ այն հատուածին: Անոնք կը պատկա- նին հաւաքականութեան մը, որ հայութիւն կը կոչուի՝ Հայաստանի մէջ կամ Հայաստանէն դուրս: Ի գուր են այն բոլոր վերագրումնե- րը, որ Մայիս 28ի գաղափարը կը նայնացնեն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հետ: Դաշնակցութիւնը կուսակցութիւն է, որուն գոյութեան իմաստը, անոր *raison d'être*-ը Հայ Դատի քարոզ լուծումն է: Հայրենիքը վեր է բոլոր կուսակցութիւններէն՝ ու- րեմն, Հայաստանը վեր է Հայ Յեղափոխական Դաշնակցութենէն:

Այս բոլորէն կարելի է հետեւեցնել, թէ Մայիս 28ի գաղափարը Դաշնակցութեան մենաշնորհը չէ եւ չի պատկանիր միայն Դաշ- նակցութեան: Սնանկ են բոլոր փաստարկումները, որ այս առն- չութեամբ կը կատարուին Դաշնակցութեան հասցէին: Եթէ Մայիս 28ը պատկանի միմիայն Դաշնակցութեան, ինչպէս կ'ուզեն հա- ւատացնել մեզի շատեր, այն ատեն Սարգարապատն ալ պէտք է մե- նաշնորհը ըլլայ միայն Դաշնակցութեան, որովհետեւ այդ ահեղ ճակատամարտներուն մէջ, բոլորէն աւելի Դաշնակցութիւնն էր, որ արին թափեց:

Սարգարապատը, այսօր, կը պատկանի բոլորի՛ն, ամբողջ հայութեան: Այդպէ՛ս կ'ըսուի, որովհետեւ ա՛յդ է իրականութիւ- նը: Իսկ ի՞նչն է, որ Սարգարապատը կը բաժնէ Մայիս 28էն՝ 48 ժամը: Արդեօ՞ք Մայիս 28ը շարունակութիւնը չէ Սարգարապա- տին: Արդեօք կարելի՞ է պատմութեան անիւր կլոր նկատել մինչեւ Մայիս 26 եւ ֆառակուսի՝ անկէ ետք:

«Մայիս 28ը», կը հաստատէ Վահան Նաւասարդեան, *«այն անմեղ իտէալն է (...), որ այսօր կը ներկայանայ մեզի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի պահանջով, բայց որ իր խորքին մէջ, իրրեւ անմեղ Զեւ ու Ոգի, աւելի՛ն է, քան այդ պահանջը»*:

«Ան Յեղի ոչ թէ քարացած, այլ յաւերժ կենդանի եւ ստեղ- ժագործող Երազն է, անսկիզբ եւ անվախճան»:

Նաւասարդեան, իր կարգին, կը մէջբերէ Լեւոնիկի հետեւե- րալ խօսքը. *«Եթէ Տէր Աստուածը իր աջ ձեռքին մէջ բռնէր ամբողջ ճշմարտութիւնը, իսկ ձախին մէջ՝ միայն յաւերժ կենդանի որո- նումը ճշմարտութեան, թո՛ղ թէ միշտ եւ յաւերժօրէն սխալելու պայմանով, եւ ըսէր ինծի. — ընտրէ՛. ես հեզօրէն կը հակէի դէպի Անոր անհակը եւ կ'ըսէի. — Տէ՛ր, ինծի ա՛յս տուր: Սրբազան ձը՜- ժարտութիւնը մատչելի է միայն եւ բացառաբար Քեզի»*:

Նաւասարդեան կ'աւելցնէ. *«Մեր պատմութեան աստուածը մեզ Մայիս 28ը տալով՝ անոր մէջ տուած է մեզի ե՛ւ որոնումի այս ջանք — ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան — որ դէպի բա- ցարձակ ճշմարտութիւնը կը տանի, տուած է մեզի ե՛ւ այն ջանք — Յեղային Ոգի — որ կը մարմնաւորէ բացարձակ ճշմարտութիւ- նը, մատչելի միայն իրեն՝ խորհուրդներով լի մեր անմեղ պատ- մութեան»*:



Հակառակ այն իրողութեան, որ խոր է անկախութեան գա- ղափարը հայութեան մէջ, միջազգային ֆաղափական այժմու իրա- վիճակին մէջ, չկայ պետութիւն մը, ժողովուրդ մը կամ շարժում մը, որ անկախ ուզէ տեսնել մեզ: Ոչ ոք կը ցանկայ մեր հայրենի- քի անկախութիւնը: Միջազգային ոչ մէկ կազմակերպութիւն կ'ուզէ ամբողջացած տեսնել հայութիւնը իր սեփական ու հարազատ հողին վրայ:

